ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2017թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 589-րդ հոդվածով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականությունը համարվող Մարգարյան փողոցի հ.45 շենքի հ.75՝ 65.9 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.21072015-01-0125 վկայական) փոխանակել Հրանտ Աղաբեկյանին, Լուսինե Մարգարյանին, Հռիփսիմե Աղաբեկյանին, Պետրոս Աղաբեկյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 28.03.2008թ. հ.2557909 վկայական) Մոլդովական փողոցի հ.29/4 շենքի հ.18 բնակարանի հետ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԳՈՒՅՔԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականությունը համարվող Մարգարյան փողոցի հ.45 շենքի հ.75՝ 65.9քմ մակերեսով բնակարանը փոխանակել Հրանտ Աղաբեկյանին, Լուսինե Մարգարյանին, Հռիփսիմե Աղաբեկյանին, Պետրոս Աղաբեկյանին սեփականության իրավունքով պատկանող Մոլդովական փողոցի հ.29/4 շենքի հ.18 բնակարանի հետ:

Երևան, Մարգարյան փողոցի հ.45 շենքի հ.75՝ 65.9քմ մակերեսով բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.21072015-01-0125 վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը, իսկ Մոլդովական փողոցի հ.29/4 շենքի հ.18՝ 34.6 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 28.03.2008թ. հ.2557909 վկայական) սեփականության իրավունքով պատկանում է Հրանտ Աղաբեկյանի ընտանիքին /ինքը, կինը աղջիկը և տղան/:

Հրանտ Աղաբեկյանը հանդիսանում է Արցախյան պատերազմի ակտիվ մասնակից։ Նա 1991 թվականից մինչև հրադադարի հաստատումը մասնակցել է Վարդենիսի բնակավայրերի, ինչպես նաև Մարտակերտի շրջանի Բաշ Գյունեփայա, Օրթա Գյունեփայա, Չլդրան, Կիչան, Մանիքլո, Հադրութի շրջանի Ցոր և Վանք գյուղերի համար մղված մարտական գործողություններին: Այնուհետև, որպես հետախուզական դասակի հրամանատար, Շուշիի առանձին հրաձգային գումարտակի կազմում մասնակցել է Մարտակերտում, Աղդամում, Կուբատլուի, Զանգելանի, Ֆիզուլու, Քելբաջարի շրջաններում ընթացող ինքնապաշտպանական և ազատագրական մարտական գործողություններին, որոնց ընթացքում ստացել է բեկորային վիրավորում և ցնցակաթված։

Հրանտ Աղաբեկյանը պարգևատրվել է ՀՀ նախագահի մարտական ծառայության մեդալով, ՀՀ պաշտպանության նախարարության «Ծովակալ Հ.Ս. Իսակով» և «ՀՀ զինված ուժերի 20 տարի» մեդալներով, իսկ 2002 թվականին ԼՂՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

Հաշվի առնելով նրա մարտական ուղին և բնակության սուղ պայմանները, ինչպես նաև բնակարանային պայմանների բարելավման անհրաժեշտությունը մշակվել է ավագանու սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույքի փոխանակման մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույքի փոխանակման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ